ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Հանցանք կատարած անձին հանձնելը /էքստրադիցիան/ այն պետությանը հանձնելն է, որի քաղաքացին է հանդիսանում հանցանք կատարած անձը կամ որի տարածքում կատարվել է հանցանքը: Պետությունների միջև կնքված պայմանագրերի և միջազգային կոնվենցիաների հիման վրա է իրականացվում հանցանք կատարած անձին հանձնումը:

«Հանձնման մասին» 1957թ. Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ պայմանավորվող կողմերը պարտավորվում են միմյանց հանձնել այդ կոնվենցիայի դրույթների և պայմանների համաձայն հանձնման ենթակա բոլոր այն անձանց, ում դեմ հայցող կողմի իրավասու մարմինները գործ են հարուցել, կամ որոնք հետախուզվում են վերոհիշյալ մարմինների կողմից դատավճռի ի կատար ածման կամ կալանավորման նպատակով:

ՀՀ–ում հանձնման վերաբերյալ իրավակարգավորում ներառված է ինչպես ՀՀ քրեական օրենսգրքում, քրեական դատավարության օրենսգրքում, այնպես էլ՝ ՀՀ Սահմանադրությամբ: Այդ նորմերով սահմանվում են հանձնման դեպքերը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած և Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, կարող են հանձնվել օտարերկրյա պետությանը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու կամ պատիժը կրելու համար: Այդ նորմերով սահմանվում են նաև դեպքերը, երբ հանձնում չպետք է տեղի ունենա, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք օտարերկրյա պետությանը չեն հանձնվում, եթե հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ հանձնումը պահանջվել է նրանց ռասայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական կարծիքի պատճառով հետաքննության կամ պատժի կիրառման համար կամ եթե պետք է հանձնվի օտարերկրյա այն պետությանը, որտեղ լուրջ վտանգ կա, որ նրան կարող են սպառնալ խոշտանգումներ կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ կամ մահապատիժ[1]:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է նաև օտարերկրյա պետության իրավասու մարմնի խնդրանքի մերժման հնարավորություն, օրինակ այն դեպքերում, երբ անձի նկատմամբ նույն արարքի համար արդեն իսկ կայացվել է օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ գործով վարույթը կարճելու և

[1] ՀՀ Սահմանադրություն, ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Դ. Ավետիսյան՝ «Հանձնման ինստիտուտի միջազգային իրավական և քրեադատավարական առանձնահատկությունները»

քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում, կամ խնդրանքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հանձնմանը, կամ հանձնման դեպքում, տվյալ օտարերկրյա պետության օրենքներին համապատասխան, կարող է նշանակվել մահապատիժ, և այդ պետությունը բավարար երաշխիքներ չի տալիս առ այն, որ հանձնելու դեպքում այդպիսի պատիժ չի նշանակվի և չի կիրառվի:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ հանցանք կատարած անձին հանձնումը պետության իրավունքն է, ոչ թե՝ պարտականությունը: Եվրոպական դատարանը անդրադառնալով հանձնման հետ կապված հարցերին, Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով նշում է. «Տանջանքների և անմարդկային վերաբերմունքի արգելքը, ինչպես նաև արդարացի դատական քննության իրավունքը կարող են հիմք հանդիսանալ հանձնումը մերժելու համար: Դրա հետ միաժամանակ, քանի որ աշխարհում տեղաշարժը հեշտանում է, և հանցավորությունն ավելի մեծ միջազգային թափ է ստանում, պետությունների համար առավել կարևոր է դառնում, որ կասկածվող իրավախախտողները, որոնք փախել են արտասահման, ենթարկվեն դատի»:

Այսպիսով, հանցանք կատարած անձին հանձնելու վերաբերյալ առկա միջազգային կոնվենցիոն և ներպետական կարգավորումները ընդհանուր առմամբ միտված են մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, ինչպես նաև ցանկացած պարագայում հանցանք կատարած անձի պատժելիությանը:

Աղավնի Մադոյան
ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ